

REV. HOUSSIG NISHANIAN
225 Vanhorne ave. apt. 1112
Willowdale, Toronto, Ontario
M2J 2T9

S 337
15 III 1983
WILLOWDALE
ON
M2J 1V0

CANADA POST
15 III 1983
2.49
M2J 1V0

His Eminence
Archbishop Torkom Manoogian
Primate, Diocese of The Armenain Church
Of America
630 Second Ave.
New York, N.Y. 10016
U.S.A.

WILL "C"
861

USPS
NEW YORK, NY
MAR 19 1983
MURRAY HILL STA.

15 III 1983
WILLOWDALE
ON
M2J 1V0

Postes Canada
Registrazione
Recommande
115 III 1983
TORONTO, ON
M5P 4T0

15 III 1983
WILLOWDALE
ON
M2J 1V0

CANADA POST
16 III 1981
TORONTO
L4W 1T0

Թորոնթոյ 15 Մարտ, 1983

Գերաշնորհ Տ.Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեջան Առաջնորդ Հայոց
Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի ու Գանատայի
Նիւ Եորք:

Սրբազան Հայր,

Փետրուար 22-ին, տեղի ունեցաւ Եկեղեցւոյս
Տարեկան Ընդհանուր Ժողովը մեր նախագահութեամբ: Ներկայացուեցան
տարբեր Մարմիններու տեղեկագրութիւնները եւ զնահատական
արտայայտութիւններով վաւերացուեցան:

Սակայն պարզան ըլլորովին տարբեր ընոյթ
ստացաւ կառուցուելիք նոր Եկեղեցւոյ շինութեան հարցով: Դեր
ու դէմ կարծիքներու անիմաստ արտայայտութիւններով ժողովս
իր ժողովական վեհութիւնն ու հանգամանքը կորսնցնելով
խնդրեցինք Ատենապետէն որ այս հարցի մասին քացառիկ ժողով մը
գումարուի. քուէի դրուելով՝ ձեռամբարձ մեծամասնութեան
քուէով ընդունուեցաւ եւ որոշուեցաւ Մարտ 20ին՝ քացառիկ ժողով:
Կը յուսամ թէ Մարտ 20 ի ժողովէն արդիւնքի մը հասնիլ:

Սրբազան Հայր, քացի վերոյիշեալներէն,
Պրն. Հրաչ Եիշմանեանի կողմէ առաջարկուեցաւ որ յետ այսու
սկսեալ այս տարիէն՝ 1983էն, Եկեղեցին միայն նշէ Ապրիլեան
Եղեռնի ոգեկոչումը քաղաքիս Հայ Եկեղեցիներուն հետ
միասնաբար կատարելով կրօնաշունչ մթնոլորտի մէջ ինչպէս
սովոր էր նախորդ տարիներուն, աշխարհական բաժինը ձգելով
քաղաքական մշակութային այլ կազմակերպութիւններու առանց
որեւէ կազմակերպչական դեր ունենալու Եկեղեցին: Երկրորդուելով
դեր ու դէմ արտայայտութիւններէ ետք իբրեւ Եկեղեցական հարց
իբրեւ Հովիւը ինչպէս նաեւ Ձեր ներկայացուցիչը, սոյն
առաջարկին լրջութիւնը՝ ժողովականներու ուշադրութեան
յանձնելով, քացատրեցինք թէ Եկեղեցին իր մասնակցութիւնը
կը բերէ աշխարհիկ որեւէ մշակութային մարմիններու կազմակեր-
պած հանդիսութիւններուն մի միայն հովանաւորութեամբ եւ
նախագահութեամբ եթէ հրաւիրուի գերծ մնալով կազմակերպչական
դեր ունենալէ. պէտք է ի մտի ունենանք որ աշխարհի վրայ
ըլլոր երկիրներու համայնքները կը ճանչցուին մի միայ Եկեղեցիով
եւ իրենց պետերով ինչ խմբակի որ ալ պատկանին անոնք՝ կուսակցական
կամ մշակութային. կը նշանակէ որ Եկեղեցւոյ վեհութիւնը
ամենաբարձրն է ըլլոր կազմակերպութիւններէն եւ մենք պարտինք
յարգել միշտ անոր նուիրապետականութիւնը:

Սրբազան Հայր, յայտնի եղաւ թէ տակաւին կոյր
կուսակցականներ կան որոնք Եկեղեցւոյ անունին ետեւը
պահուրտած կ, ու լ գ են աշխատիլ իրենց կուսակցական շահերուն ի նպաստ
օգտագործելով Եկեղեցին: Անսալով մեր թելադրանքներուն
քուէարկուեցաւ նոյն խմբակին կողմէ եւ ձեռամբարձ մեծամասնութեան
քուէով որոշեցին որ միջ-Եկեղեցական յարանուանական յուշատօնէն զատ
կուսակցական եւ մի քանի այլ կազմակերպութեանց հետ երկրորդ անգամ
մըն ալ նախաձեռնէ Եկեղեցին նահատակաց Ոգեկոչումը:

Մեր կեցուածքը եղաւ ժխտական: Կը յուսամ թէ անցեալի մէջ կատարուած սխալները պէտք է շարունակուին որպէսզի Հայաստանեաց Եկեղեցին իր բարձրութեան վրայ մնալով կոյր հետեւորդներու խմբակի մը նպատակին չօգտագործուի: Ներեցէք ինձի Սրբազան Հայր համարձակութիւնը ունենալու բաց սրտով արտայայտուիլ - իբրեւ Հայր եւ Ռդի-: Այսօր տարի մըն է որ Ձեր նշանակումով կը գործակցիմ Եկեղեցւոյս ծխական Խորհուրդին հետ այժմ համոզմամբ կրնամ ըսել թէ ինչու Ս.Երրորդութեան Եկեղեցին չունենար իր մնայուն Հովիւը որովհետեւ կոյր կուսակցական խմբակը պառակտելով ծխական Խորհուրդի անդամները չեն թողուր որ ծխականի կազմը իր պարտականութիւնը կատարէ պատշաճօրէն Եկեղեցւոյ շէնութեան եւ պայծառութեան, հեռուէն դիտելով եւ կազմակերպուելով միշտ իրենց կուսակցական շահերը ամէն բանէ վեր դասելով կու գան իրենց որոշումը ծխականին եւ Հովիւին պարտադրելու առ ի գործադրութիւն առանց երբեք երեւալու: Իսկ նորրոնտիր անդամներու ընտրութեան հարցով Սարգիս Չիլինկիրեանի ղէմ տարուած աշխատանքները ծխական անդամներու գործակցութեամբ զոհուեցաւ 7 քուէի տարբերութեամբ որ կրնամ ըսել թէ 9 անդամներէն միակն է որ հոգւով եւ մարմնով իր կարելին կ,ընէ Եկեղեցւոյ համար: Գրութեանս փաստը զոհացուցիչ պէտք է եղած ըլլայ Սրբազնութեանդ ղրկուած դեր ու ղէմ գրութիւնները Օրջանեանին, Յոբեանին, Եսայեանին եւ Չիլինկիրեանին: Շատ պիտի ցաւիմ եթէ իսկապէս Սարգիսը պիտի չկարողանանք հաստատել իր պաշտօնին վրայ. շատ բան պիտի տուժէ Եկեղեցին անոր հեռացումովը որովհետեւ մեր Համայնքին մեծամասնութեան համակրութիւնը վայելող անձ մըն է արդարօրէն:

Վերոյիշեալ պարագաները ձեր հայրական անաչառ ուշադրութեան յանձնելու նախանձախնդրութեամբ ստիպուեցայ սոյն երկտողս ուղարկել Սրբազնութեանդ պարտն ու պատշաճը տնօրինելու: Սպասելով Ձեր արդար կարգադրութեան կը մնամ որդիական ակնածանօք՝ մատչելով ի համբոյր Ս.Աչոյդ անկեղծ սիրով

Յուսիկ Բահանայ Նշանեան

Յուսիկ Բահանայ Նշանեան

Հովիւ Ս.Երրորդութիւն Հայաստանեաց Առաքելական Եկեղեցւոյ Թորոնթոյ-Գանատա